ՀԱՅՈՑ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

ԱՐՏԱՇԵՍ ՄԱՔԵՎՈՍՅԱՆ

Գլաձորի համալսարանը Հայաստանի միջնադարյան բարձրագույն դպրոցների՝ վարդապետարանների, շարունակական շղթայի մի հզոր օղակն է, որը բարձրագույն կրթությունը հասցրեց նոր մակարդակի։ Այն իր ընդհանուր մշակութային, ուսումնագիտական, աղգային և հասարակական-քաղաքական եռանդուն գործունեությամբ խոր հետք է թողել հայ իրականության մեջ ամենից առաջ իր ժողովրդին ամենանվեր ծառայելու նպատակադրվածությամբ, ծավալած մանկավարժական վիթխարի և համարձակ գործունեությամբ, որի համար էլ հայ իրականության մեջ առաջինը կոչվեց համալսարան։

Վարդապետական ուսուցումը հայոց մեջ սկիզբ է առնում մեծ լուսավորիչներ Մեսրոպ Մաշտոցից և Սահակ Պարթևից։ Սաների վկայությամբ Գլաձորի համալսարանում «նորոգեցաւ զաստիճան վարդապետութեան լուսաւորչացն մերոց»[1], «վերստին ուղղեաց և դարձեալ նորոգեցաւ զկարգս վարդապետական եղանակաց»[2]։

Վաղարշապատում առաջին հայագիր-հայալեզու դպրոցը բացվելուց հետո հիմնվում է կենտրոնական վարժարան, ուր աշակերտներից ընդունակները ձեռք բերելով ուրիշներին սովորեցնելու հմտություն, ուղարկվում էին Հայաստանի տարբեր կողմերում ուսուցանելու[3]։ «Հայաստանի մեջ գոյություն ունեցող միակ բարձրագույն ուսումնարանը, Վաղարշապատի մայր վարժարանը, զոր Վռամշապուհ կհովանավորեր և ուր Սահակ և Մաշտոց անձամբ կդասախոսեին, գրեթե ոչնչով կտարբերեր հունական բարձրագույն դպրոցներեն, վասն զի հոն ալ կդասախոսվեին աստվածաշունչը կազմող գրոց ուսումեն զատ, քրիստոնյա դաստիարակության անհրաժեշտ դատված գիտությունները, որոնք էին Քերականությունը, Հռետորությունը և Տրամասությունը (դիալեկտիկա)։

Այս էր ժամանակին ուսման «ծրագիրը»,—եզրակացնում է Ա. Ալպոյաճյանը[4]։ Եռյակ գիտությունները ծրագրում ամրապնդելուց հետո Դավիթ Անհաղթն առաջադրեց քառյակ գիտությունների՝ թվաբանության, երաժշտության, երկրաչափության և աստղաբաշխության ներդրումը ուսումնակրթական ծրագրում որպես բարձրագույն կրթության հիմք[5]։ Այն ինչ առաջադրում էր Դավիթ Անհաղթը, մարմնավորեց Անանիա Շիրակացին՝ VII դ. երկրորդ կեսի սկզբներին։ Նա դրեց «Քննիկոն» համայնագիտական դասագիրքը որպես բարձրագույն կրթության հիմք։ Ի դեպ, Արևմտյան Եվրոպայում ևս քառյակ գիտությունները VI—XV դդ. բարձրագույն կրթության հիմքն էին։ Ինչպես Դավիթ Անհաղթը, այնպես էլ Անանիա Շիրակացին իրենց տեսությունն ու ծրագրերը կառուցում էին հին հունական փիլիսոփայության և դպրոցական ծրագրերի հիման վրա, այն քաղելով ոչ թե Արևմտյան Եվրոպայից, այլ անմիջապես հունական միջավայրից՝ հարմարեցնելով և ծառայեցնելով հայ իրականությանը[6]։ XI դարասկզբին Գրիգոր Մագիստրոսը Պետրոս կաթողիկոսից խնդրելով Ա. Շիրակացու «Քննիկոնից» մի օրինակ, այն գնում է Սանահնի իր ճեմա-

---

1 *Մ. Մաշտոցի անվան մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. № 4517, էջ 372ա։*

2 *«Արձագանք», 1888, № 10, էջ 130—131։*

3 *Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 58։*

4 *Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ դպրոցի, Կահիրե, 1946, էջ 72։*

5 *Դավիթ Անհաղթ, Սահմանք իմաստասիրության, Երևան, 1960, էջ 126—134։*

6 *Ա. Մաթևոսյան, Անանիա Շիրակացու «Քննիկոնը» (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1974, № 7, էջ 66—78, № 8, էջ 71—81)։*

բանի ուսուցման հիմքում, որը հանձնարարում է նաև Անիի Պետրոս կաթողիկոսի բարձրագույն դպրոցին[7]։

Վարդապետական ծրագիրն ավելի խորացվեց Անիի և Հաղբատի վարդապետարաններում Հովհաննես Սարկավագի ձեռքով՝ XI դ. վերջին և XII դ. սկզբներին։ Քառյակ արվեստի արմատավորման հետ միասին նա կարգավորում է նաև սուրբ Գրքի դասավանդվող մասերը։ Հետագա տարիներին դասընթացի մեջ է մուծվում Աբասի որդի Գրիգորի Պատճառաց գիրքը, ապա այն կատարելագործվում է Մխիթար Գոշի վարդապետարանում, Վանականի՝ Խորանաշատի, Վարդան Արևելցու՝ Խոր վիրապի բարձրագույն դպրոցներում։ Վերջինս իր դպրոցի համար շարադրում է հայոց պատմություն, աշխարհագրություն, քերականություն, մեկնում Հնգեմատյանը, Սաղմոսները, Երգ երգոցը և այլն։ Վարդանի մահից հետո (1271 թ.) դպրոցը տեղափոխվեց նոր բարունապետ Ներսես Մշեցու հայրենիք՝ Մշո Առաքելոց վանք, ուր գոյատևեց մի տասնամյակից ավելի։

Հիշատակված բարձրագույն դպրոցների կողքին գործում էին նաև մեծ ու փոքր այլ վարդապետարաններ, ինչպես բուն Հայաստանի, այնպես էլ Կիլիկյան հայկական պետության տարբեր վանքերում, որոնցում ուսուցումը տարվում էր նույն ծրագրով, որը, սակայն, հարմարեցվում էր վարդապետարանի մասնագիտական թեքմանը և ուսուցման տեղությանը։ Այդ դպրոցներում ևս մշակվում, հարստացվում էր վարդապետական ծրագիրը։ «Մեր մեջ վարդապետական ուսումը կրոնական կարգին հետ կապված չէր,— գրում է Ա. Ալպոյաճյանը, ...վարդապետական ուսումը ...կավանդվեր քահանայական ձեռնադրութենն հետո և վարդապետական աստիճանի տվչությունը բոլորովին անկախ էր կրոնական աստիճաններեն... և միշտ ավելի բարձր տիտղոս մը կը համարվեր... իբր գիտութեան և հմտութեան աստիճան»[8]։ Միջնադարյան Հայաստանում «դպրոցը վարդապետի անձի հետ էր կապված, երբեմն և անկախ հոգևոր իշխանության կամ նվիրապետության կողմից»[9],— լրացնում է Գ. Հովսեփյանը։ Վարդապետարաններն անկախ էին եպիսկոպոսների իշխանությունից և առանձին էին գործում՝ իրենց շրջանավարտներին այս ու այն կողմ ուսուցչության ուղարկելով։ Այս հանգամանքը թեև եկեղեցական իշխանության տեսակետից անկարգապահություն էր, բայց առանց այդ անկախության նրանք անզոր կգտնվեին «մաքառելու օտար հավատաորսներու կատարած ձեռնարկներուն դեմ և պիտի չկրնային պայքարիլ սեփական նախաձեռնությամբ ընդդեմ այն օտարոտի ներարկումներուն, որոնք ոչ միայն հայ եկեղեցին, այլ նաև մեր լեզուն կաղճատեին և կապականեին»,— գրում է Ա. Ալպոյաճյանը[10]։ Նա մեր վարդապետարանները համարում է «մեր իմացական կյանքին վառարանները և հայ քաղաքակրթության պահապանները»[11]։ «Մեր իմացական կյանքի վառարաններից» կատարյալ կազմակերպված և տեսական հաստատության՝ Գլաձորի համալսարանի և մյուս համալսարանների անկախ, գիտական-մանկավարժական, հասարակական-քաղաքական գործունեությունը Ներսես Մշեցու, Եսայի Նչեցու, Դավիթ Նորավանեցու, Տիրատուր Կիլիկեցու, Հովհան Որոտնեցու, Սարգիս Ապրակունեցու, Գրիգոր Տաթևացու բարունապետությամբ, և մի քանի տասնյակ շրջանավարտների հիմնած դպրոցների առկայությունը դրա վառ ապացույցն են։

Գլաձորի համալսարանի հիմնադրումը կապված է Հայոց վարդապետարանի նոր բարունապետ Ներսես Մշեցու անվան հետ։ Ինչպես Գլաձորի համալսարանի, այնպես էլ մեր մյուս դպրոցների պատմության ուսումնասիրության

---

7 «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», Ալեքսանդրապոլ, 1908, էջ 9—10, հմմտ. Ա. Մաթևոսյան, Նորից «Քննիկոնի» մասին («Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 2, էջ 223—239)։

8 Ա. Ալպոյաճյան, նշվ. աշխ., էջ 276։

9 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ, Անթիլիաս, 1969, էջ 254։

10 Ա. Ալպոյաճյան, նշվ.աշխ., էջ 275—276։

11 Նույն տեղում, էջ 275։

հիմնական աղբյուրը ձեռագրերն են ու դրանց հիշատակարանները, որոնք գրված են տեղում սովորող աշակերտների կամ դասատուների ձեռքով և եղել են ուսումնական հիմնական ձեռնարկներ։

Ներսես Մշեցի։ բաբունապետը հունական կրթություն ուներ, լավ գիտեր հունարեն, լատիներեն և գնահատում էր նրանց դպրության հնությունն ու կարևորությունը։ Այս հանգամանքը հետագայում իր դրոշմն է դնում Ներսես Մշեցու և նրան հաջորդող ու նրան աշակերտած Եսայի Նչեցու մանկավարժական-կազմակերպական աշխատանքների վրա. նրանց դպրոցը կոչվում էր «երկրորդ Աթենք», որտեղ ուսուցումը տարվում էր «ըստ էլլադական սահման պայմանի»[12]։ Ուսումնակրթական գործին զուգընթաց, Ներսես Մշեցին ընդօրինակել է տալիս վարդապետական ծրագիրը կատարելագործելու համար անհրաժեշտ երկեր ու ձեռագրեր։ 1282 թ. Ստեփանոս գրիչը Ներսեսի համար ավարտում է մի ձեռագիր, որը սրբագրում է Եսայի Նչեցին։ Գրչության վայրը չկա, բայց հիշվում է «զՄովսէս բեմբական, որ ամենայն մարմնաւոր հանդըստեամբ սպասաւորեաց մեզ»[13]։ Նշանակում է Ստեփանոս գրիչը, պատվիրող Ներսես վարդապետը և սրբագրող Եսային այլևս իրենց սեփական հարկի տակ, այսինքն՝ Առաքելոց վանքում չէին, այլ մի ուրիշ վանքում, որի սպասավոր հոգևորական Մովսեսը հոգում է նրանց մարմնավոր հոգսերը, նրանց սպասավորում իր վանքում։ Մեկ այլ՝ 1283 թ. սկսած և 1284 թ. ավարտած ձեռագրի հիշատակարանում Մատթեոս Կիլիկեցին Աղբերց վանքը հիշում է որպես Ներսես բաբունապետի դպրոցի ապաստարան.

«Որոյ եկեալ յայս գաւառի,
Որում անուն Վայձոր կոչի,
Հուպ ի շիրիմքն Սիւնեցի,
Ի յԱղբերց վանս մենաստանի,
Յերկրորդ Աթէնս պանծալի,
Առ ոտս հաւր մեր Ներսէսի»[14]։

Նշանակում է 1282 թ. գարնանը Ներսես Մշեցին իր դպրոցը հաստատում է Վայոց ձոր գավառի Աղբերց վանքում, որը հետագայում վերանվանվում է Գլաձորի վանք, իսկ վարդապետարանը՝ Գլաձորի համալսարան։ Վայոց ձորի Աղբերց վանքի անմիջական տերերը Պռոշյաններն էին, Սյունյաց աշխարհի ընդհանուր տերերը՝ Օրբելյան իշխանները, իսկ հոգևոր տերը՝ Սյունյաց մետրոպոլիտը։ Ահա սրանք էլ հովանավորում էին Գլաձորի համալսարանը, կատարում շինություններ և ապահովում նրանց ապրելու անհրաժեշտ պահանջմունքները։

1283—1284 թթ. Աղբերց վանքում Մատթեոս քահանան ընդօրինակում է «Յովհաննու յայտնութեան» մեկնությունը, Սարգիսը՝ Եվագրի խրատները, Եսային սրբագրում է այդ ձեռագիրը, իսկ նկարիչ Մոմիկը գլխավարդ է նկարում[15]։ Եսային կազմում է նաև մի ժողովածու, ուր տրված էին համալսարանական ծրագրի նյութերի պատճառները, այսինքն՝ ստեղծման հանգամանքները։ Այդ ժողովածուում Եսային առաջին անգամ հիշվում է որպես վարդապետ։ Ներսես Մշեցու մահից հետո ստանձնելով Գլաձորի համալսարանի բաբունապետությունը, Եսայի Նչեցին (Սասնո գավառի Նիչ գյուղից) ավելի սերտ հարաբերություններ է ստեղծում Օրբելյանների հետ և ավելացնում համալսարանի նյութական հնարավորություններն ու շինարարական ձեռնարկումները։ Շատանում են աշակերտները, բարձրանում է համալսարանի և նրա բաբունա-

---

12 «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան (այսուհետև՝ «ԺԴ դ. հիշատակարաններ»), Երևան, 1950, էջ 272։

13 Մատենադարան, ձեռ. № 49, էջ 338ա։

14 Հ. Տաշյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց ի Վիեննա, Վիեննա. 1895, էջ 485բ։

15 Նույն տեղում։

պետի հեղինակությունը։ Ուսումնական ծրագրի հագեցվածության համար, ձեռնարկումներին զուգընթաց, նա սկսում է ճակատել նաև Արևմուտքից եկող կաթոլիկական վտանգի դեմ և ղեկավարել այդ պայքարը Սյունյաց մետրոպոլիտի հետ։ Կիլիկիա՝ Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսին ուղարկված համախոսականի սակ նա ստորագրում է այսպես. «Ես Եսայի կրտսեր բանասիրաց և յետին վարժապետ, իմով աշակերտօքս համախոհ եմ և միաբան եմ այսմ գրոց և վերոյգրեալ արանցս»[16]։ Ուրեմն, Եսայի Նչեցին արդեն իրեն այնքան ուժեղ էր զգում իր աշակերտներով, որ նրանց հետ միասին հանդես էր գալիս հանուն հայ ժողովրդի շահերի պաշտպանության, իսկ միաբարական շարժման հետևանքով եկեղեցական կարգերի ու ժամասացության մեջ առաջացած շփոթը հստակելու համար Արևելյան Հայաստանի վարդապետները և վանքերի առաջնորդները դիմում են Եսայի Նչեցուն՝ նրանից իմանալու եկեղեցական կարգերի և ժամասացության ճշգրտությունը։ Նչեցին պատասխանում է նրանց և հորդորում լինել հավատարիմ նախնիների ավանդներին։

Ի՞նչ էին դասավանդում Գլաձորի համալսարանում։

Գլաձորի վարդապետական ուսուցման կարգի և առարկաների մասին տեղեկություններ ստանում ենք այնտեղ գրված ձեռագրերի, մասնավորապես Եսայի Նչեցու «Ոսկեփորիկի», մատենագրական գործերի ու ձեռագրական հիշատակարանների մեջ պահպանված ուղղակի հիշատակություններից, ինչպես նաև՝ շրջանավարտների հիմնած դպրոցների գործունեությունից։ Կա, սակայն, մի ցանկ, որը լիակատար գաղափար է տալիս Գլաձորի ուսումնական ծրագրի սահմանների մասին։ Դա Գլաձորի համալսարանի անմիջական շարունակություն հանդիսացող Որոտնավանքի և Տաթևի համալսարանում դասավանդված առարկաների ու գիտությունների թվարկումն է, որ բերում է այդ համալսարանի շրջանավարտներից մեկի՝ Թովմա Մեծոփեցու կենսագիր Կիրակոս բանասերը։ Վերջին, անդրադառնալով իր ուսուցչի ստացած վարդապետական կրթության ծավալին, գրում է. «...էր ամենայն առաքինութեամբ զարդարեալ՝ տեսականաւն, գործնականաւն և գիտնականաւն, զի ուսեալ էր զերկոտասան մասունք իմաստասիրութեան. զբնաբանականն, զուսումնականն, զաստուածաբանականն և զբարոյականն, զտնտեսականն և զքաղաքականն. զթուականն, զերաժշտականն, զերկրաչափականն և զաստղաբաշխականն, և զամենայն իմաստս հռետորական հանճարոյ արտաքին փիլիսոփայութեան է (7) գրոց, որ է Քերականն, Սահմանքն, Պորփիւրն, Ստորոգութիւնքն Արիստոտելին, Պերիարմենիասն, Աշխարհացն, Առաքինութեանցն, և զՀին և զՆոր կտակարանացն աստուածեղէն տառիցն Հ և Բ (72) գրոց, և Ե (50) նուրբ գրոց դժուարիմաց և խրթին բառիւք ծածկեալ աստուածազարդ և ուղղափառ սուրբ վարդապետաց, եւ զԾԱ (51) վիպասական պատմագրաց...»։ «Մեր միջնադարյան վարդապետարանների ծրագիրն է այս»[17],— գրում է Գ. Հովսեփյանը և ավելացնում՝ «Բացի յոթ իմաստասիրական գրքերից այդ ցուցակի մեջ են մտնում Նյուսացու, Աստվածաբանի, Բասղի, Փիլոնի, Դիոնիսիոս Արիսպագացու անվան հետ կապված որոշ գրքեր, որոնք «նորբեր» կամ «նուրբ գրյանք» են կոչվում, Հին և Նոր կտակարանի «ԺԸ մեկնիչ՝ ինքը Հին և ինքը Նոր կտակարանից»[18]։ Որ իսկապես Գլաձորում նույնպես սովորել են «զերկոտասան մասունք իմաստասիրութեան», երևում է Եսայի Նչեցուն նվիրված ներբողից, ուր ասված է.

«Թուով զակունս երկոտասան
Եւ զմարգարիտս անհասական,
Ամբարեալ ես ի շտեմարան,
Ով գերահրաշ վաճառական...»[19]։

---

16 Ս տ. Օրբելյան, Պատմություն տանն Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 462։

17 Գ. Հովսեփյան, Թովմա Մեծոփեցու կյանքը, Վաղարշապատ, 1914, էջ 1—2, ԺԳ։

18 Նույն տեղում։

19 Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 135։

Վարդապետական ծրագիրն ընդգրկում էր աշխարհիկ և հոգևոր կրթությանը վերաբերող առարկաների մի ամբողջ համակարգ։ Ուսանողները պարտավոր էին ուսումնառության 7—8 տարիների ընթացքում աստվածաբանություն սովորելուց բացի, տիրապետել «արտաքին», այսինքն՝ աշխարհիկ գիտություններին և արվեստներին։ Դրանք կոչվում էին «աղատ արվեստներ» կամ գիտություններ և թվով յոթն էին։ Առաջին երեքը՝ քերականությունը, հարատասանությունը և տրամաբանությունը, կազմում էին եռյակ, մյուս չորսը՝ թվաբանությունը, երաժշտության տեսությունը, երկրաչափությունը և աստղաբաշխությունը քառյակ գիտություններ։ Վերոհիշյալ առարկաները դասավանդելու համար Գլաձորի համալսարանում օգտագործվել է ոչ քրիստոնյա, հեթանոս, անտիկ փիլիսոփաների և եկեղեցական հեղինակավոր գիտնականների աշխատություններն ու մեկնությունները։ Եսայի Նչեցու «Ոսկեփորիկի»[20] մեջ, ուր տրված է նուրբ գրոց պատճառների շարադրանքը, հանդիպում ենք նաև Ողիմպիանոսի առարկաներին. «Սակս աւերման Իլոնի և շինելոյ Հռոմա» և այլ վիպասական, առասպելական, պատմական հատվածներ։

Ուսումնառության շրջանն ավարտելուց հետո Գլաձորի համալսարանի շրջանավարտին շնորհվում էր վարդապետական աստիճան, որը բարունապետության կողմից ղեկավարվող ու անցկացվող արարողություն է եղել և կրել է գիտական-պաշտոնական բնույթ։ Շրջանավարտը պարտադիր կարգով քննություն է հանձնել իր անցած դասընթացից։ Քննությունից դատ նրան հանձնարարվել է որևէ երկ՝ ավարտաճառ շարադրելու և պաշտպանելու համար։ Պաշտպանությունն իրականացրել է համապատասխան հանձնաժողովը, որին ներկա են եղել բարունիներ, արդեն պաշտպանած շրջանավարտներ, հրավիրված հոգևոր և աշխարհիկ իշխանության ներկայացուցիչներ և այլք։ Գլաձորի համալսարանի ատենախոսությունները տեղի են ունեցել Գլաձորի վանքում, իսկ պսակադրողը եղել է համալսարանի բարունապետ և վանքի առաջնորդ Եսայի Նչեցին։

Գլաձորի սաներից Առաքել Հաղբատեցին, որը ավարտելուց հետո Թիֆլիսի հոգևոր դպրոցի բարունապետն էր, իր ուսուցչի գործունեության արդյունքն այսպես է ներկայացնում. «...թողլով զաւակ ժառանգութեան բազում ի ծոցս եկեղեցւոյ և ի հանդիսարանս վարժարանացն»։ Ուրեմն, Գլաձորի համալսարանը պատրաստում էր եկեղեցու սպասավորներ և վարժարանների վարդապետներ, ուսուցիչներ, որոնք կոչվում էին բարունիներ։ Գլաձորի համալսարանում քահանայական աստիճան ունեցողներին ընդունելուց բացի, տեղում նույնպես պատրաստում էին քահանաներ, այսինքն՝ Գլաձորում կար և՛ քահանայական, և՛ վարդապետական լսարան, այստեղից էլ՝ համալսարան անվանումը։ Վարդապետարանին ոչ միայն տեղի քահանայական լսարանն էր սաներ տալիս, այլև Գլաձորի շրջանավարտների դպրոցները։ Դավիթ Գեսակեցին այսպես է նկարագրում աշակերտներ հավաքելու Նչեցու գործունեությունը. «...ցուպ ի ձեռին առեալ, զտհաս և զանիմաստ համբակս ժողովէ ի փարախս իմաստութեան, ընդ որ եւ այժմ է տեսանել, զի ի բաղում գաւառաց կան զեգերեալ առ պէտս վարժից եւ տէլէտս իմաստից. իսկ սա գործէ և կազմէ զնոպանացեալ անդաստանս իւրոց աշակերտեալ մանկանց, ի վեր բողբոջէ արս կատարեալս իւրով որոշմամբ և քաղցրուսոյց վարդապետութեամբ»[21]։ Բազմաթիվ աշակերտների քահանայական և վարդապետական աստիճաններ շնորհելուց հետո ուղարկում էր իրենց գավառները. «ի ծոցս եկեղեցւոյ և ի հանդիսարանս վարժարանացն»։

Գլաձորի համալսարանի 360 աշակերտների Եսայի Նչեցին է վարդապետական աստիճան շնորհել։ Եկեղեցու սպասավորներից քչերի մասին տեղեկություն ունենք, քանի որ հիշատակարաններում նրանց քիչ ենք հանդիպում։ Համալսարանի առաջին շրջանավարտներից է Ստեփանոս Օրբելյանը՝ Սյունյաց

20 Մատենադարան, ձեռ. № 437։

21 Գ. Հովսեփյան, Խաղրակյանք կամ Պոռչյանք..., էջ 250։

Եպիսկոպոսը՝ պատմիչ, բանաստեղծ, նրա հաջորդներ Հովհաննես Օրբելը, կրտսեր Ստեփանոսը, որոնք եկեղեցական նվիրապետական պաշտոնավարությունից զատ, բեղմնավոր մշակութային գործունեություն են ծավալել։ Եկեղեցական գործիչ էր Կարապետ Տոսպեցին, որը հայրենասիրական եռանդուն գործունեություն է ծավալել Երուսաղեմում և Կիլիկիայում։ Գլաձորի որոշ սաներ առանձին թեմերի առաջնորդներ էին։ Իսկ բաբունապետները դպրոցներ ղեկավարելիս իրենց կապերը ամուր էին պահում «մայր իմաստից» համալսարանի, նրա ուսուցչապետների հետ ոչ միայն անհրաժեշտ ձեռնարկներ ընդօրինակելու, այլև խորհրդակցելու, համապատասխան ցուցումներ ստանալու համար։ Գլաձորի համալսարանն այդ կարգի կապերի մեջ էր նաև այն դպրոցների հետ, որոնք գոյություն ունեին մինչև նրա վայոց ձորում հաստատվելը։ Այդպիսիք էին Գրիգոր բաբունապետի՝ Բշնիի և Թեղենիքի դպրոցները, ինչպես նաև Վերին Նորավանքի դպրոցը, որի Դավիթ բաբունապետը Օրբելյանների Եպիսկոպոսանիստ Նորավանքի առաջնորդն էր, իսկ հետո աշխատել է Գլաձորում։ Դավիթը մահացել է 1329 թվականից առաջ և թաղվել Նորավանքում։ Նրան փոխարինել է Գլաձորի սան Կյուրիոնը, որը հիշվում է մինչև 1240-ական թվականները։

Գլաձորի սաների հիմնած և նրանց ղեկավարած դպրոցներից են.

Մեծոփա վանքի դպրոց. Մխիթար Սասնեցի, համալսարանի առաջին սաներից էր։ Նշեցու հանձնարարությամբ շարադրել է մի ժողովածու՝ ուղղված միաբարների դեմ։ Նրան կաթոլիկները ամբաստանում են Հռոմի պապի առջև։

Այրիձորի դպրոց. Հովհաննես Արճիշեցի, Մխիթար Սասնեցու դասընկերը Գլաձորում և գործակիցը Քաջբերունիքում։ Գրել է պատարագի մեկնություն։ Ստեփանոս Արճիշեցին նախորդների դասընկերն ու նրանց գործակիցն է։ Սասնեցու աշակերտ Մկրտչի հետ գրել է Մխիթար Սասնեցու վարքը։

Կողբա վանքի դպրոց. Մատթեոս Մլիճեցի, աշխատել է Այրարատյան աշխարհի Կողբա ս. Մարի վանքում։

Թիֆլիսի դպրոց. Առաքել Հաղբատեցի, ավարտելով համալսարանը՝ ղեկավարել է Թիֆլիսի դպրոցը։

Հաղբատի դպրոց. Ավետիս Հաղբատեցի, համալսարանը ավարտելուց հետո վերադարձել է Հաղբատ ուսուցչության։

Երզնկայի դպրոց. Կիրակոս Երզնկացի, նախատեսված էր Եսայի Նշեցուն փոխարինելու, սակայն վերադառնում է հայրենի գավառ և զբաղվում բաբունապետությամբ։ Հովհաննես. Կիրակոսի եղբոր որդին, աշխատել է Երզնկայի դպրոցում՝ իր հորեղբոր հետ միասին։

Սալմաստի դպրոց. Ավագ բաբունապետ, աշխատել է Ատրպատականում, Թիֆլիսում, ապա կարգվել Սալմաստի դպրոցի բաբունապետ։

Թեղենիքի դպրոց. Մկրտիչ Թեղենացի, քահանայական կրթությունն ստացել է Գրիգոր Բշնեցի բաբունապետի մոտ։ Գլաձորի համալսարանում վարդապետական աստիճան և դասավանդելու իրավունք ստանալուց հետո վերադարձել է հայրենի Թեղենիք և կարգվել սեղի դպրոցի բաբունապետ։

Կիլիկիայի Ջորովանքի դպրոց. Վարդան Կիլիկեցի, սովորել է Կիլիկիայի Ակների վանքի դպրոցում, Հովհաննես Արքաեղբայր բաբունապետի մոտ։ Վերջինիս մահից հետո (1289 թ.) Գլաձորի համալսարանում վարդապետական աստիճան ստանալով, վերադառնում է Կիլիկիա, Ակների մոտակայքի Ջորովանքում զբաղվում գրչությամբ և ուսուցչությամբ։

Քոնայի դպրոց. Հովհաննես Քոնեցի, ավարտելով Գլաձորի համալսարանը, 1328 թ. նշանակվում է Երնջակի շրջանի հոգևոր առաջնորդ, ապա տարվելով կաթոլիկական գաղափարներով, դառնում է միաբարների առաջնորդ և Քոնայի իր դպրոցում թարգմանում է ունիթորական գրականություն ու տարածում նրանց գաղափարները։

Ծորձորի դպրոց. Հովհաննես Ծորձորեցի, ծնվել է Երզնկայում, ավարտել է Գլաձորի համալսարանը և աշխատել է Արտազի Ծորձոր վանքում, որտեղից և Ծորձորեցի մականունը։ Բաբունապետ էր, թարգմանիչ, մատենագիր։

Տարոնի դպրոց. Ներսես Տարոնացի, Առաքելոց վանքից։ Ավարտելով Գլաձորի համալսարանը, հարում է միաբարներին և աշխատում Տարոնի Առաքելոց վանքում։

1338 թ. մահանում է Եսայի Նչեցին. Գ. Հովսեփյանի արտահայտությամբ՝ Եսայի Նչեցու մահվամբ մեռնում է դպրոցը Գլաձորում։ «Այս վանքի պատմությունը տարօրինակ սկիզբ և վախճան ունի,— շարունակում է նա,— անհայտությունից հանկարծ երևան է գալիս ԺԴ դարի ութսունական թվականի սկզբում, իբրև Արևելյան Հայաստանի մտավոր կենտրոն, և հանկարծ չքանում անհայտության մեջ ԺԴ դարի կեսին։ Անորոշ է նույնիսկ տեղը»[22]։ Սա ճիշտ է. վանքն անհայտ էր մինչև վարդապետարանի այնտեղ հաստատվելը և անհայտացավ համալսարանի տեղափոխվելու հետ։ Այս հանգամանքը ցույց է տալիս, որ, հիրավի, Աղբերց վանքը եղել է Սյունիքի աննշան վանքերից մեկը։ Սակայն այն, ինչ ասվեց Գլաձորի վանքի մասին, Գլաձորի համալսարանին չի վերաբերում։ Եսայի Նչեցու համալսարանը շարունակությունն էր հայոց նախորդ վարդապետարանների և «անհայտությունից հանկարծ երևան» չեկավ, ոչ էլ «հանկարծ չքացավ անհայտության մեջ»՝ ինչպես կտեսնենք։ Հայոց միջնադարյան առաջին համալսարանին վիճակված էր անցնելու երկար ճանապարհ, տարբեր ժամանակներում հաստատվելով տարբեր վանքերում՝ պահպանելով և հարստացնելով ստեղծված ավանդները թե՛ ուսուցման ու դաստիարակության և թե՛ հասարակական-քաղաքական գործունեության ասպարեզներում։ Գլաձորի համալսարանն այդպիսի ճակատագիր է ունեցել և այդպես է ընկալվել դեռևս միջնադարում։ Տաթևի համալսարանի բարձրագույն պետերից Մատթեոս Ջուղայեցին, Գրիգոր Տաթևացու մահից հետո (1410 թ.), նրա վարքը շարադրելիս, գրում է. «Մեծ փիլիսոփայն Հայոց Յոհաննէս Որոտնեցին... զկնի մահուանն իւր ետ հրաման (Գրիգոր Տաթևացուն—Ա. Մ.) նրստել յաթոռ մեծ համալսարանին Եսայեայ և բարձրագոյն Հայոց Մեծաց»[23]։ Տաթևի համալսարանը շարունակությունն էր «մեծ համալսարանին Եսայեայ»։

1338 թ. Գլաձորի համալսարանը երկրորդ բարձրագույն Տիրատուր Կիլիկեցու գլխավորությամբ թողնում է Գլաձորի վանքը և հաստատվում Վայոց ձորի Հերմոնի վանքում, որը գտնվում էր Օրբելյանների սիրությամբ։ Անտարակույս, դա կապված էր քաղաքական պայմանների փոփոխության հետ, որոնք տեղի էին ունենում Հայաստանում, մոնղոլական պետության վերջին տարիներում։ Այդ ժամանակ, իշխանական մյուս տոհմերի հետ, հալածվեցին և աղքատացան նաև Պռոշյանները[24], համալսարանը կորցրեց հովանավորող տներից մեկը, իսկ Եսայի Նչեցու մահվամբ՝ նաև բարձրագույն պետին։ 1338 թ. Գլաձորի համալսարանի սան Գրիգորը ձեռագիր է ընդօրինակում «ի վանս Հերմոնի, ի վարժապետութեան ընդհանուր Հայկազեանս սեռի, երջանկի, մեծի և երիցս երանելի հռետորի Տիրատուր առձայնելոյ, առ որ կամք դեղերեալ ի վարժ կրթութեան, փափագելով բնական ստեանց սորա, որպէս մանուկ առ մայր, և որպէս զաւակաւ ծնաւղ, որ սփոփէ զկեանս մեր ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ»[25]։ Տիրատուրը եկել էր Կիլիկիայի Մլիճի կամ Սկևռայի վանքից։ 1291 թ. նա ստանում է մի Նարեկ[26]։ 1309 թ. Գլաձորում ընդօրինակում է մի Աւետարան[27]։ 1321 թ. արդեն բարձրագույն էր[28], իսկ 1337 թ. հիշվում է Եսայի Նչե-

---

22 Նույն տեղում, էջ 251։

23 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան (այսուհետև՝ «ԺԵ դ. հիշատակարաններ»), մասն Ա, Երևան, 1955, էջ 104 (ծթ)։ Ընդգծումը մերն է—Ա. Մ.։

24 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք..., էջ 295—296։

25 Ն. Պոզարյան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեան (այսուհետև՝ «Ցուցակ Երուսաղեմի»), հ. Դ, Երուսաղեմ, 1969, էջ 592։

26 Բ. Կյուլեսերյան, Ցուցակ ձեռագրաց Անկյուրիո Կարմիր վանուց և շրջակայից, Անթիլիաս, 1957, էջ 661—662։

27 Մատենադարան, ձեռ. № 3393։

28 «ԺԴ դ. հիշատակարաններ», էջ 174։

ցու հետ՝ որպես մեծ բաբունապետ։ Նրա աշակերտները ձեռագիր էին ընդօրինակում «...առ ոտս մեծ բաբունապետացն Յեսայի և Տիրատրոյ»[29]։

Հերմոնի վանքում տեղավորված հայոց համալսարանի մասին շատ քիչ տեղեկություն ունենք։ Այստեղի աշքի ընկնող սաներից էին հիշյալ Գրիգորը, Կիրակոսը և Հովհան Որոտնեցին։ Վերջինս 1337 թ. Նշեցուց քահանայական աստիճան էր ստացել։ Հերմոնի համալսարանի սաներից էին նաև Սարգիսը, հետագայում՝ Որոտնեցու գործակիցը, Սիմեոն Ռշտունցին, Վարդան Ճգնավորը և ուրիշներ։ Սարգիս բաբունապետը 1369 թ. համալսարանի սաների մի մասի հետ տեղափոխվում է Երնջակի գավառի Ապրակունյաց վանք, միաբարների գլխավոր կենտրոն Քռնայի մոտ՝ նրանց դեմ ավելի մոտիկից պայքարելու համար։ Սիմեոն Ռշտունցին 1350-ական թվականներից Մոկաց Սարի ս. Գևորգ վանքի դպրոցի բաբունապետն էր։ Վարդան Ճգնավորը՝ Ցիպնավանքի դպրոցի բաբունապետը։

Հերմոնի վանքում համալսարանը գոյատևում է մինչև 1356 թ. և տեղափոխվում նոր բաբունապետ Հովհան Որոտնեցու հայրենի գավառ։ Հովհան Որոտնեցին ծնվել է 1313 թ. Որոտան գավառի Վաղատին գյուղում, Սյունյաց իշխան Իվանեի ընտանիքում։ Եսայի Նշեցուց քահանայական աստիճան ստանալուց հետո Որոտնեցին Տիրատուր Կիլիկեցուց վարդապետական աստիճան է ստանում և կարգվում նրան օգնական, իսկ հետո փոխարինում է նրան որպես համալսարանի բաբունապետ։ 1363 թ. նրա պատվերով Տփխիսում ընդօրինակվում է Հովհան Դամասկացու մատենագրությունը։ Գրիչը նշում է, որ այն գրվել է. «...ի խնդրոյ տիեզերալոյս վարդապետին Յովանիսի, որո գաւառն և հայրենիքն Որոտն է»[30], իսկ մի այլ հիշատակագիր, հաղորդում է, որ նա «երեսուն ամ պարապեալ ի դասատուութիւն, լուսաւորելով զԱրևելեան երկիրն»։ Սա նշանակում է, որ Որոտնեցին բաբունապետությունը սկսել է մահվանից երեսուն տարի առաջ (1386—30=1356 թ.)։ 1372 թ. Որոտնեցին հիշում է «զտիեզերալոյս վարժապետն մեր զՏիրատուր, որ փայլէր ի ժամանակին իւրում իբրեւ զարեգակ ի մէջ աստեղաց»[31]։ Համալսարանը Որոտնավանքում մնում է մինչև 1384 թ., երբ «Թուրքն էառ զերեզն զՈրոտան և Կախիկ վարդապետն գնաց փախստական ի Սարայ...»[32]։ Երկու տարի համալսարանը թափառում է հայրենի երկրում. «մեք ընդ սուրբ և տիեզերահամբաւ և երանաշնորհ բաբունապետիս Հայաստանեաց և վերադիտողի տեառն Յովհաննու Որոտնեցւոյ կայաք կարդալ և գրել ի համալսարան սորին... եկին և առին զբերդն Որոտան... և կամէին ձերբակալ առնել զսուրբ բաբունիս մեր վասն հայրենեացն ժառանգութեան...»[33]։ 1386 թ. Հովհաննես Որոտնեցին հաստատվում է Երնջակի Ապրակունյաց վանքում, և նույն թվականին մահանում։ Այդ թվականին համալսարանի բաբունապետ է նշանակվում Գրիգոր Տաթևացին։

Որոտնեցու աշակերտներից Գևորգ Երզնկացին վերադառնում է հայրենի գավառ և Կապոսի վանքում դպրոց հիմնում, Հակոբը՝ Սաղմոսավանքում է դպրոց հիմնում, Հովհաննեսը՝ հայրենի Մեծոփավանքում, Գրիգոր Խլաթեցին՝ Սարգիս բաբունապետի դպրոցում, ապա Ցիպնավանքում։

Գրիգոր Տաթևացին (Խութլուշահ) ծնվել է 1344 թ. Վրաստանի Թմոգվի բերդավանում, արճիշեցի Ամիր Սարգսի և փարպեցի Մարիամի ընտանիքում։ Սովորել է Որոտնեցու համալսարանում և 1373 թ. վարդապետական աստիճան ստացել։ Բաբունապետի մահից հետո ստանձնել Եսայու մեծ համալսարանի բաբունապետությունը՝ Ապրակունյաց վանքում, երկու տարի հետո տե-

29 Նույն տեղում։

30 «Ցուցակ երուսաղեմի», էջ 521։

31 Մատենադարան, ձեռ. № 5204, էջ 66բ։ Ի գեպ, այս Որոտնեցուց մեզ հայտնի միակ ինքնագիրն է։

32 Նույն տեղում, ձեռ. № 7825, էջ 37։

33 Նույն տեղում, ձեռ. № 5707, էջ 485բ։

ղափոխվել է Տաթև և ծավալել ուսումնամանկավարժական, հասարակական-քաղաքական, մատենագրական բուռն գործունեություն։ 1408 թ. տեղափոխվել է Մեծոփավանք և այնտեղ հիմնել գրչության բարձր տիպի դպրոց։ 1409 թ. Երևանի Անանիա առաքյալի անապատում վարդապետական աստիճան է շնորհել քաջքերունցի իր տասը աշակերտներին։ Սրանք, փաստորեն, Գլաձորի համալսարանի վերջին շրջանավարտներն էին, որ վարդապետական աստիճան և դասասելու հրաման ստացան մեծ րաբունապետ Գրիգոր Տաթևացուց։ 1410 թ. Գրիգոր Տաթևացին վերադառնում է Տաթև և այնտեղ էլ մահանում։ «Տեղապահ աթոռոյս վարժապետին» նշանակվում է Մխիթար վարդապետը, որն հետո դառնում է րաբունապետ և ղեկավարում Տաթևի դպրոցը մինչև 1425 թվականը[34]։

Գրիգոր Տաթևացու աշակերտներից Թովմա Մեծոփեցին ղեկավարել է Մեծոփավանքի բարձր տիպի դպրոցը, Հովհաննես Հերմոնացին՝ Հերմոնի դպրոցը, Կարապետ Խառաբաստեցին՝ Խառաբաստի դպրոցը, Սիմեոն Եղվարդեցին՝ Այրիվանքի, ապա Եղվարդի դպրոցները, Մկրտիչ Օրբելենցը՝ Արգելանի Տեր Հուսկան որդու դպրոցը, Հակոբ Ասպիսընկացին՝ Անձղնապատի դպրոցը և այլն։ Հովհաննես Հերմոնեցի և Թովմա Մեծոփեցի րաբունապետները կատարելով իրենց մեծ րաբունապետի ցանկությունը, 1441 թ. Ամենայն հայոց կաթողիկոսությունը վերահաստատեցին Վաղարշապատ քաղաքի ս. էջմիածնի վանքում։

Այսպիսով, հիմնադրվելով 1282 թ., Ներսես Մշեցու ջանքերով, Վայոց ձորի Աղբերց վանք-Գլաձորում, հայոց միջնադարյան համալսարանը Եսայի Նչեցու րաբունապետությամբ գործում է մինչև 1338 թ., Տիրատուր Կիլիկեցու րաբունապետությամբ Հերմոնի վանքում մինչև 1356 թ., Հովհաննես Որոտնեցու րաբունապետությամբ Որոտնավանք և Ապրակունյաց վանքում՝ մինչև 1386 թ., Գրիգոր Տաթևացու րաբունապետությամբ Ապրակունյաց վանքում, ապա Տաթևում՝ մինչև 1410 թ., որպես Գլաձորի, Հերմոնի, Որոտնավանքի, Տաթևի համալսարաններ։ Համալսարանը շուրջ հարյուր հիսունամյա գոյության ընթացքում քույր բարձրագույն դպրոցների և իր սաների դպրոցների ուղեկցությամբ հսկայական գիտական-մանկավարժական, հասարակական-քաղաքական, դավանաբանական, ընդհանուր մշակութային գործունեություն է ծավալել՝ ունենալով գաղափարական, ուսումնական, կազմակերպչական գործունեության հստակ ծրագիր։ Գլաձորի համալսարանում, ինչպես նշվեց, «նորոգեցաւ զաստիճան վարդապետութեան լուսաւորչացն միրոց»։ Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը աշակերտներ էին հավաքում, սովորեցնում, լավագույններից վարդապետներ պատրաստում և ուղարկում էին գավառները ուսուցչության։ Գլաձորի համալսարանում (ի տարբերություն նախորդ վարդապետարանների, որ քահանայական կրթությամբ էին ընդունում և հասցնում վարդապետական աստիճանի) երեխաներ էին հավաքագրում, նախ քահանայական, ապա վարդապետական կրթություն էին տալիս և ուղարկում գավառները, որ գավառները չմնան «առանց վարդապետական ուսման»։ Որոտնեցին նույնպես «ժողովէր զհեռաւորս և զմերձաւորս, զորբս և տանընտանիս, երկնէր և ուսուցանէր, և փառաւոր յաստիճանս նստուցանէր»[35]։ Եսայի Նչեցու միարարների դեմ պայքարը նրա սաները շարունակում էին իրենց դպրոցներում։ Մխիթար Սասնեցին, րաբունապետի հանձնարարությամբ, ճառեր էր գրում միարարների դեմ՝ օգտագործելով հենց իրենց միարարների աշխատությունները։ Նույնն էին անում Որոտնեցին և Տաթևացին։ Գրիգոր Տաթևացին արտագրում է միարարների ձեռնարկներից մեկը՝ համապատասխան պարզաբանումներով։ Ոմն ընթերցող ձեռնարկի լուսանցքում գրել է. «... Ո Տաթևացի, ո՞չ յերկնչիս յԱստուծոյ խառնելով զթոյնդ անապական գինւոյ, որ սպան՝ ոգիս պարզամտաց». կամ «...Որոտնեցին և Տաթևացին զորոմ յոգնապատիկ սերմանեալ է ի մէջ

34 «ժե դ. հիշատակարաններ, էջ 338։

35 Մատենադարան, ձեռ. № 5707, էջ 485բ։

գրդիս»[36]։ Երբ Տաթևացին Սարգիս բարունապետի դպրոցի նոր բարունապետ է նշանակում Գրիգոր Խլաթեցուն, վերջինս պատասխան նամակում հավաստիացնում է, թե «հեսևիմք անխոտոր պողոտայիդ, աւժանդակեմք պատերազմող ոգւոյդ»։ Այնուհետև շրջաբերական է ուղարկում ունևորներին, որպիսի օգնեն Մեծոփավանքի դպրոցին, «զի ուրախասցին մանկունք Սուրբ Լուսաւորչին և կարեսցի լեզու հերձուածողացն դասուս»[37]։

Միջնադարյան Հայաստանում թաթար-մոնղոլական, լենկթեմուրյան, այլևայլ ցեղերի ու բռնակալությունների պատերազմների, ավերածությունների, դավանաբանական նկրտումների պայմաններում հայոց համալսարանի հարյուր հիսունամյա գոյությունը հերոսություն էր, հայ ժողովրդի կենսունակության, հայ մտավորականության՝ եկեղեցու և մշակույթի գործիչների ու նրանց հովանավորների՝ հայրենիքի և ժողովրդի նկատմամբ ունեցած անսահման սիրո և նվիրվածության արտահայտություն, որի համար հիմնական զենքը մայրենի լեզուն ու գիրն էր, հայոց դպրությունը, նահինների ավանդներին հավատարմությունը։

АРМЯНСКИЙ СРЕДНЕВЕКОВЫЙ УНИВЕРСИТЕТ

АРТАШЕС МАТЕВОСЯН

Резюме

Новейшие данные, почерпнутые из памятных записей рукописей, показывают, что Гладзорский университет, основанный в 1282 г. в Вайоц Дзоре, продолжал действовать там до 1338 г., до смерти его ректора Есаи Нчеци. Затем университет переместился в монастырь Ермон, где он был возглавлен учеником Есаи Нчеци, вторым ректором—Тиратуром Килпкеци. В 1356 г. назначается новый ректор—Ован Воротнеци, который переносит университет в свой родной край—Воротнаванк, где деятельность университета продолжалась до 1384 г., когда Ован Воротнеци, спасаясь от преследований, перебирается в Ернджак, в монастырь Апракуняц. В 1386 г. Ован Воротнеци умирает, завещая Григору Татеваци возглавить университет, основанный «великим ректором—Есаи Нчеци». Григор Татеваци переносит университет в Татев и руководит им до 1410 г. После его смерти университет возглавляет вардепат Мхитар (до 1425 г.).

Таким образом, армянский средневековый университет просуществовал около 150 лет—с конца XIII в. до первой половины XV в. Своей обширной просветительской и научно-культурной деятельностью он сыграл значительную роль в армянской действительности.

---

36 Նույն տեղում, ձեռ. № 4619, էջ 47ա, 62բ։

37 Ս. Մարարյան, Գրիգոր Խլաթեցու նամակները (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1978, № 5, էջ 83—84)։